Ջատագովության համառոտագիր

ՀԸԳՀ-ի շրջանակում առողջապահության ոլորտի հանձնառությունների իրականացման ամրապնդումը Հայաստանում

Համատեքստ և նախապատմություն

Սույն փաստաթուղթը պատրաստվել է քաղաքացիական հասարակության կողմից իրականացված մոնիթորինգի հիման վրա, որի շրջանակներում գնահատվել է Հայաստանի կողմից ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ներքո առողջապահությանն առնչվող դրույթների իրականացումը: Վերլուծությունը կենտրոնացել է ՀԸԳՀ ճանապարհային քարտեզում նշված հանձնառությունների և ժամկետների վրա՝ համալրված առողջապահության նախարարության հետ պաշտոնական նամակագրությամբ, փորձագիտական հարցազրույցներով, ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրությամբ և ԵՄ լավագույն փորձի հետ համեմատական վերլուծությամբ: Ամբողջական արդյունքները ներկայացված են մոնիթորինգի զեկույցում և ամփոփագրում:

Առաջնային առաջարկություններ

- Արագացնել «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի ընդունումը՝ ապահովելով համակարգային բարեփոխումների և միջազգային վարկային միջոցների արդյունավետ օգտագործման իրավական հիմքերը:
- Օրինականորեն ամրապնդել կանխարգելիչ բժշկության կիրառումն առաջնային, երկրորդային և երրորդային մակարդակներում՝ նպաստելով հանրային առողջապահության խթանմանը և ՀԸԳՀ-ի նպատակներին համընթաց առաջընթացին:
- Քաղցկեղի բուժման ուղեցույցները համապատասխանեցնել ԵՄ և ԲՈՒԵԱ չափորոշիչներին՝ ընդլայնելով անհրաժեշտ դեղերի հասանելիությունը, այդ թվում՝ հիվանդության ուշ փուլում գտնվող պացիենտների համար:
- Վերանայել էլեկտրոնային առողջապահության համակարգերին վերաբերող օրենսդրությունը՝ հստակեցնելով տվյալների հասանելիության դերերն ըստ օգտատերերի, ապահովելով բժշկական գաղտնիությունը և բարելավելով համակարգերի փոխգործելիությունը:
- Ապահովել պացիենտների շահերի պաշտպանության կազմակերպությունների օրինական և գործառնական մասնակցությունն առողջապահական քաղաքականությունների մշակման և վերահսկման մեխանիզմներին:

Հիմնավորում և համատեքստի վերլուծություն

Թեև Հայաստանի Հանրապետությունը մշակել է առողջապահական բարեփոխումների ռազմավարական ծրագրեր և ապահովել է միջազգային ֆինանսական աջակցություն, օրենսդրական ձգձգումներն ու թերի իրականացումը շարունակում են մնալ հիմնական խոչընդոտներ: Համընդհանուր առողջության ապահովագրության համար օրինական հիմքի բացակայությունը թուլացնում է բարեփոխումների արդյունավետությունը՝ չնայած 102 միլիոն եվրոյին համարժեք արդյունքահեն վարկի հասանելիությանը: Էլեկտրոնային առողջապահության համակարգերը շարունակում են մնալ հատվածային, իսկ պացիենտները չունեն երաշխավորված իրավունքներ՝ մասնակցության և պաշտպանության մասով: ՀԸԳՀ-ի հավակնությունները գործնական արդյունքների վերածելու համար անհրաժեշտ են նպատակային օրենսդրական և քաղաքական բարեփոխումներ:

Եզրակացություն

Ժամանակին իրականացվող օրենսդրական բարեփոխումները և շահագրգիռ կողմերի համակարգված ներգրավվածությունն անչափ կարևոր են՝ ապահովելու ոչ միայն ՀԸԳՀ-ի շրջանակում առողջապահության ոլորտի հանձնառությունների պաշտոնական ճանաչումը, այլև գործնականում դրանց իմաստալից կյանքի կոչումը: Կարևոր օրենսդրական հիմքերի, մասնավորապես՝ «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի բացակայությունը խոչընդոտում է ներառական առողջապահական բարեփոխումների իրականացումը՝ նույնիսկ միջազգային ֆինանսական և տեխնիկական աջակցության առկայության պայմաններում: Իրավական հիմքերի ամրապնդումը, միջոլորտային համակարգված համագործակցության խթանումը և պացիենտների մասնակցության ինստիտուցիոնալացումն զգալիորեն կբարելավեն Հայաստանի առողջապահական համակարգի թափանցիկությունը, արդարությունը և կայունությունը: ՀԸԳՀ դրույթների համապատասխանեցումն ազգային բարեփոխումներին միայն ձևական պարտավորություն չէ, այլ ռազմավարական հնարավորություն՝ ողջ բնակչության համար հանրային առողջապահության և բուժօգնության որակի իրական բարելավում ապահովելու առումով:

Վիոլետա Զոփունյան | violetazopunyan@gmail.com

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Վիոլետա Զոփունյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: